ՆՈՐՔ
ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ
«ՆՈՐՔ» ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԵՎ ԻՐԱԶԵԿՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
""NORK" SOCIAL SERVICES TECHNOLOGY AND AWARENESS CENTER" FUND

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«"ՆՈՐՔ» ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ և ԻՐԱԶԵԿՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ

ՄԱՍՆԱԿՑԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջների համաձայն, ուսումնասիրելով ՆՍԾՏԻԿ-ԳՀԾՁԲ-23/42 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի նախագահի կողմից 05.02.2024թ-ի զեկուցագրով ներկայացված «ՕԼ ՀՈԹԵԼՍ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ներկայացված հիմքերը, *պարզեցի հետևյալը.*

1. Գնահատող հանձնաժողովի նախագահի ներկայացրած փաստերը և պահանջը.

Գնահատող հանձնաժողովի նախագահը Պատվիրատուի ղեկավարին ուղղված 05.02.2024թ-ի զեկուցագրով հայտնել է հետևյալը.

««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի /այսուհետ նաև՝ «Նորք» տեխնոլոգիաների կենտրոն/ կարիքների համար 2023 թվականի դեկտեմբերի 6-ին հայտարարված հյուրանոցներում բնակվելու ծառայությունների ձեռքբերման նպատակով ՆՍԾՏԻԿ-ԳՀԾՁԲ-23/42 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) շրջանակներում, որպես ընտրված (հաղթող) մասնակից է ճանաչվել «ՕԼ ՀՈԹԵԼՍ» ՍՊԸ-ն (ՀՎՀՀ՝ 06952538, գործունեության հասցե՝ ՀՀ, ք. Ստեփանավան, Գ. Նժդեհի 15-34, հեռ.՝ +37455878787, էլ-հասցե՝ allhotels.am@gmail.co):

«Նորք» տեխնոլոգիաների կենտրոնի կողմից անգործության ժամկետը լրանալուն հաջորդող 4-րդ աշխատանքային օրը՝ 18.01.2024թ-ին, «ՕԼ ՀՈԹԵԼՍ» ՍՊԸ-ին՝ Armeps համակարգի միջոցով, ինչպես նաև՝ իր կողմից հայտով ներկայացված էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկելու միջոցով ծանուցվել է պայմանագրի նախագիծը և պայմանագիր կնքելու առաջարկը:

26.01.2024թ-ին Հանձնաժողովը արձանագրել է, որ «ՕԼ ՀՈԹԵԼՍ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում՝ 25.01.2024թ-ը ներառյալ, սահմանված ժամկետում և կարգով չի ներկայացրել «ՕԼ ՀՈԹԵԼՍ» ՍՊԸ-ի կողմից հաստատված պայմանագիրը, պայմանագրի և որակավորման ապահովումները:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը «ՕԼ ՀՈԹԵԼՍ» ՍՊԸ-ի հայտը մերժել է, և «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված պահանջները կիրառելու նպատակով «ՕԼ ՀՈԹԵԼՍ» ՍՊԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ

տեղեկատվությունը որոշել է ներկայացնել «Նորք» տեխնոլոգիաների կենտրոնի գործադիր տնօրենին:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները՝ առաջարկում ենք «ՕԼ ՀՈԹԵԼՍ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով կայացնել պատճառաբանված որոշում և հիշյալ որոշումը գրավոր ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն:

2. Գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

Ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Նորք» տեխնոլոգիաների կենտրոնի կարիքների համար 2023 թվականի դեկտեմբերի 6-ին հայտարարված հյուրանոցներում բնակվելու ծառայությունների ձեռքբերման նպատակով ՆՍԾՏԻԿ-ԳՀԾՁԲ-23/42 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) շրջանակներում, որպես ընտրված (հաղթող) մասնակից է ճանաչվել «ՕԼ ՀՈԹԵԼՍ» ՍՊԸ-ն (ՀՎՀՀ՝ 06952538, գործունեության հասցե՝ ՀՀ, ք. Ստեփանավան, Գ. Նժդեհի 15-34, հեռ.՝ +37455878787, էլ-հասցե՝ allhotels.am@gmail.co):

2. «Նորք» տեխնոլոգիաների կենտրոնի կողմից անգործության ժամկետը լրանալուն հաջորդող 4-րդ աշխատանքային օրը՝ 18.01.2024թ-ին, «ՕԼ ՀՈԹԵԼՍ» ՍՊԸ-ին՝ Armeps համակարգի միջոցով, ինչպես նաև՝ իր կողմից հայտով ներկայացված էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկելու միջոցով ծանուցվել է պայմանագրի նախագիծը և պայմանագիր կնքելու առաջարկը:

3. 26.01.2024թ-ին Հանձնաժողովը արձանագրել է, որ «ՕԼ ՀՈԹԵԼՍ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում՝ 25.01.2024թ-ը ներառյալ, սահմանված ժամկետում և կարգով չի ներկայացրել «ՕԼ ՀՈԹԵԼՍ» ՍՊԸ-ի կողմից հաստատված պայմանագիրը, պայմանագրի և որակավորման ապահովումները:

4. Գնահատող հանձնաժողովը որոշել է «ՕԼ ՀՈԹԵԼՍ» ՍՊԸ-ի հայտը մերժել է, և «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված պահանջները կիրառելու նպատակով «ՕԼ ՀՈԹԵԼՍ» ՍՊԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ տեղեկատվությունը որոշել է ներկայացնել «Նորք» տեխնոլոգիաների կենտրոնի գործադիր տնօրենին:

3. Պատվիրատուի ղեկավարի հիմնավորումները և եզրահանգումը.

«Նորք» տեխնոլոգիաների կենտրոնի գործադիր տնօրեն Ա. Պարզյանս (այսուհետ՝ Պատվիրատուի ղեկավար), ուսումնասիրելով Գնահատող հանձնաժողովի նիստը նախագահողի կողմից ներկայացված զեկուցագիրը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի

միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակը, այդ թվում՝ ռուսերեն, վարում և հրապարակում է լիազորված մարմինը: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Սույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել: Մասնակիցը նշված ցուցակում ընդգրկվում է ներառվելու օրվան հաջորդող օրվանից երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, Պայմանագրի և (կամ) որակավորման ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել ապահովումը: Եթե ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 10 աշխատանքային օր: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի և (կամ) որակավորման ապահովումը:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո սույն օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետում չի ստորագրում պայմանագիրը կամ պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի և (կամ) որակավորման ապահովումը, իսկ կնքվելիք պայմանագրով կանխավճար նախատեսված լինելու դեպքում՝ նաև կանխավճարի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

Այսպիսով՝

- «Նորք» տեխնոլոգիաների կենտրոնի կարիքների համար 2023 թվականի դեկտեմբերի 6-ին հայտարարված հյուրանոցներում բնակվելու ծառայությունների ձեռքբերման գնման Ընթացակարգի շրջանակներում «ՕԼ ՀՈԹԵԼՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է մասնակցության հայտ:
- «ՕԼ ՀՈԹԵԼՍ» ՍՊԸ-ն ճանաչվել է, որպես ընտրված (հաղթող) մասնակից:
- 18.01.2024թ-ին, «ՕԼ ՀՈԹԵԼՍ» ՍՊԸ-ին՝ Armeps համակարգի միջոցով, ինչպես նաև՝ իր կողմից հայտով ներկայացված էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկելու միջոցով ծանուցվել է պայմանագրի նախագիծը և պայմանագիր կնքելու առաջարկը:
- 26.01.2024թ-ին Հանձնաժողովը արձանագրել է, որ «ՕԼ ՀՈԹԵԼՍ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում՝ 25.01.2024թ-ը ներառյալ, սահմանված ժամկետում և կարգով չի ներկայացրել «ՕԼ ՀՈԹԵԼՍ» ՍՊԸ-ի կողմից հաստատված պայմանագիրը, պայմանագրի և որակավորման ապահովումները:
- Գնահատող հանձնաժողովը որոշել է «ՕԼ ՀՈԹԵԼՍ» ՍՊԸ-ի հայտը մերժել:

Ուսումնասիրելով հիմքերը, դրանք համադրելով առկա ապացույցների հետ՝ արձանագրում եմ, որ «ՕԼ ՀՈԹԵԼՍ» ՍՊԸ-ն թույլ է տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, քանի որ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացի՝ վերանշյալ չափաբաժինների մասով՝ տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի խախտում, քանի որ որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ՀՀ ֆինանսների նախարարությունը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն Մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է ներառվելու օրվան հաջորդող օրվանից երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Գնահատող հանձնաժողովի նախագահի կողմից ներկայացրած հիմքերը՝ «ՕԼ ՀՈԹԵԼՍ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցողների ցուցակում ներառելու համար, գնահատել բավարար:
2. «ՕԼ ՀՈԹԵԼՍ» ՍՊԸ-ի ներքոնշյալ տվյալները գրավոր ուղարկել լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը, «ՕԼ ՀՈԹԵԼՍ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով.

Մասնակցի						
Անվանումը	ՀՎՀՀ/ֆիզ. անձի դեպքում հանրային	գործունեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը			ցուցակում ներառելու մասին պատվիրատ
			խախտել է գնման գործընթացի	**խախտել է պայմանագրով**	**որպես ընտրված**	

	ծառայության համարանիշը		շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը	**նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը**	**մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից**	ուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը
«ՕԼ ՀՈԹԵԼՍ» ՍՊԸ	06952538	ՀՀ, ք. Ստեփանավան, Գ. Նժդեհի 15-34		X	X	05.02.2024թ. ՆՍԾՏԻԿ-ԳՀԾՁԲ-23/42

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվան հաջորդող օրը:

ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ՝ **ԱՆԱՀԻՏ ՊԱՐՋՅԱՆ**